

mines about 144591 million dollars since 2006 till 2010 has imported from Armenia to Iran and 806492 million dollars has exported from Iran to Armenia. Based on given statistics Iran export bulk to Armenia over the in question years was about 5/58 fold of Armenia export volume to Iran.

Over the years 2007-2009 the amount of Armenia exports to Iran has decreased which this one isn't a good sign for Armenia exports. Iran exports to Armenia basically includes: tarry mineral oils, Molybdenum, its oxides and hydroxides, soya oil, sheet types, petrol products, ferro-silicon, glass, conserve and compote, textiles and ect., and Iran imports from Armenia includes to aluminium and iron loss, living animals like sheep, blocks, locomotive elements.

The most exporting material of Iran to Armenia has been tar with 5859 thousands dollars and the most exporting good from Armenia to Iran is living animal like sheep in quantity 20205 thousands dollars. The first to the fourth grade of exporting materials from Iran to Armenia devote to tar (5859 thousands dollars), suya and its appurtenance (4423 thousands dollars), milled products of iron and steel (3796 thousands dollars), and finally there is non cross milled products of iron and steel (3637 thousands dollars). The first till fifth rank of Iran importing goods from Armenia includes living animals like sheep (20205 thousands dollars), steel loss (2047 thousands dollars), aluminium loss (2031 thousands dollars), battery loss (1038 thousands dollars) and milled sheets of aluminium (623 thousands dollars). As it is clear from graph, Iran exports to Armenia over the in question years has increased about 92/64% while importing from Armenia to Iran just about 36/31% has increased.

Future perspectives: Regarding to above mentioned issues and relative decrease of Iran exports to Armenia over the 2008-2010 it is necessary to provide a complex export-based commercial and economical program or the existence rules for simplify be revised. The most important notes for export improvement to Caucasus region are as follow:

The exchange of private section commercial boards, Up bringing the ambassadors and experts whom have specialty, experience and sufficient knowledge to economical and commercial affairs, Islamic Republic of Iran embassies must perform requirement cooperation and pursuit towards Iranian companies demands from debtor companies of these countries, Issuing visa for merchants, investigator, truck drivers and visitors, Dispatching the commercial counselors and establishing their offices in out of embassy for providing the close relations with private sections, Endowment bank credits for engineering and technical services issue and simplifying the credit meet for establishing Iran commercial center in other countries, Regular schematization for fairs holding and control these fairs before and after fair in these countries, Monitoring the exporting policies for issuing the qualified goods with apt package and brochures in local language, Establish the exporter union inmate in each of these countries, Provide finance and timely paid of exporting services and goods awards, Determine the rival tariff value with other region countries, The cooperation expansion in diamond industry with Armenia, and Develop solidarity in electricity field.

References:

1. Sedigh Mirebrahim, *Iran relations with Caucasus Republics (since 1991)*, *Studies journal of central Asia and Caucasus*, #53, pp. 275-278.
2. Sedigh Bathai Asl Mirebrahim, *Political and economical relations of Armenia with Islamic Republic of Iran*, *Nur Raskhun cultural institution, thematic articles*.
3. Momayez Leyla, *Economic globalization effects on Iran foreign policy (the first part)*, *International relations collection, International economic articles*.
4. Musavi Seyed Rasoul (1995), *Articles set of resources and capacities seminar in central Asia and Caucasus*, Press, Ministry of foreign affairs.
5. *The articles of tenth international congress of Caucasus and Central Asia: 10-years changes, Past experiences and future perspectives*, *Political and international studies office, Ministry of foreign policy*, 2004.
6. *Caucasus and central Asia studies journal, Ministry of foreign policy*, 1994.
7. *The fourth program of economical, Social and cultural development of Iran, 2005-2009*, p. 6.
8. Musavi Seyed Rasoul (2003/10), *In quest of "Common idea for Caucasus security"*, *Diplomatic Hamshahri*, 2003, #4, p. 12.
9. Seraj Reza (2008), *Verifying the roots and consequences of war in Caucasus*, *Farsi news*.
10. Reza Seyed Kazem (2006), *Moscow and washangton after America congress election, increase of conflicts*, p. 24.
11. Afshordi Mohamad Hosein (2002), *Caucasus geopolitic and foreign policy of Iran, war super era*.
12. Mojtabehzadehm Piruz (1995), *Iran views regarding to Caspian sea-Centrin Asia, political and economical journal*, 14th year, #155-156, p. 8.
13. Moazami Ghoudarzi Parvin (1999), *Iran and Russia situation in Central Asia and Caucasus, Caucasus and central Asia studies journal*, 9th year, #95-96.
14. *Tehran chamber of commerce, industries and mines*, <http://www.tccim.ir>

20-րդ դարի վերջին տասնամյակներից սկսած՝ զբոսաշրջության ոլորտում արձանագրվեց անսխառեպ աճ: Այն դարձավ մի շարք երկրների տնտեսության զարգացման հիմնական գործոններից մեկը: Այսպիսի պայմաններում ոլորտը չէր կարող անուշադրության մատնվել, եւ ստեղծվեցին պետական մի շարք ստորաբաժանումներ, որոնք պետք է զբաղվեին զբոսաշրջության ոլորտի կարգավորմամբ: Այդպիսի մարմիններ էին Իսպանիայում Էկոնոմիկայի նախարարության ներքո գործող Առեւտրի, զբոսաշրջության եւ փոքր բիզնեսի պետական քարտուղարությունը, Գերմանիայում՝ Ազգային զբոսաշրջային կոմիտեն, Ավստրիայում զբոսաշրջության հարցերը կարգավորում է Էկոնոմիկայի նախարարությունը, Շվեյցարիայում՝ Չբոսաշրջության կենտրոնական գերատեսչությունը, Հայաստանի Հանրապետությունում՝ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջային վարչությունը եւ այլն:

Չբոսաշրջության ոլորտի պետական միջամտությունը կարող է դրսեւորվել ուղղակի եւ անուղղակի ազդեցության մի շարք գործիքների միջոցով.

- ոլորտին վերաբերող օրենսդրական դաշտի ստեղծում, օրենքները պետք է կարգավորեն զբոսաշրջությանը վերաբերող հիմնական հարցերը՝ ներառելով հեռանկարային ոլորտների ակտիվացումը,
- հակաճգնաժամային միջոցառումների մշակում, որոնք պետք է հնարավորինս մեղմեն համաշխարհային տնտեսության մեջ սկիզբ առած անբարենպաստ գործընթացները,
- ներդրումային գրավիչ միջավայրի ստեղծումը,
- շրջանների համաչափ զարգացման աջակցությունը,
- զբոսաշրջային եւ այլ ոլորտների միաժամանակյա զարգացման ապահովումը,
- առաջարկվող ծառայությունների ընդլայնման շնորհիվ զբոսաշրջիկների ներհոսքի մեծացումը:

Երբ խոսքը վերաբերում է զբոսաշրջության ոլորտի պետական կարգավորման տնտեսական մեխանիզմներին, հիմնականում ելնում են այն դիտարկումներից, որ զբոսաշրջությունը՝ որպես բազմաոլորտային համակարգ, առավել կարիք ունի համակարգման եւ կարգավորման, քան այլ ոլորտներ: Պետությունը պետք է միջամտի, երբ դրա կարիքը բխում է հասարակության եւ ոլորտի շահերից:

Չբոսաշրջության ոլորտին պետական միջամտությունը պայմանավորված է նաեւ հետեւյալ հանգամանքով: Այն տնտեսության մեջ գործող օղակներից է, որի հաջող զարգացումը մեծապես կախված է նաեւ այլ ոլորտներից: Դրանցից են տրանսպորտը, կապը, ապահովագրական գործը, բնապահպանությունը, տեղական ենթակառուցվածքների զարգացածությունը եւ այլն: Սրանց հաջող գործունեության ապահովումը անհնար է առանց պետական միջամտության:

Ինչպես նշեցինք, զբոսաշրջության ոլորտի պետական կարգավորումը տարբերվում է այլ ոլորտներից: Նախ՝ այստեղ գործող բոլոր կազմակերպությունները պետությունից ակնկալում են զբոսաշրջային բարենպաստ միջավայրի ստեղծում: Ի՞նչ է սա նշանակում: Չբոսաշրջության զարգացումը, դրա խթանումը մեծ մասամբ ոչ թե կախված են վերոնշյալ քաղաքականություններից, այլ պետական սեփականություն հանդիսացող, զբոսաշրջիկների համար հետաքրքրություն ներկայացնող մի շարք տեսարժան վայրերից, որոնք պետք է պատշաճ վերաբերմունք ցուցաբերվի: Սա պատահական չէ, քանի որ զբոսաշրջիկներին հիմնականում գրավում են ազգայինը, յուրահատուկը: Պետական միջամտությունը կարեւորվում է ոչ միայն այդ օբյեկտների խնամքով, այլեւ դրանց ընթացիկ վերահսկողությամբ: Այսպիսի միջոցառումները կարող են իրականացվել միայն պետության նախաձեռնությամբ, չնայած ֆի-

նանսավորման աղբյուրները կարող են տարբեր լինել: «Ծագելով մասնավոր հատվածում՝ զբոսաշրջությունը կարող է կայուն զարգանալ, եթե պետական կառույցները ապահովեն դրա համար անհրաժեշտ իրավական, քաղաքական, տնտեսական և այլ պայմաններ: Զբոսաշրջությունը ամբողջությամբ շուկայական գործոնների ազդեցությանը ենթարկելով՝ չի կարելի ապահովել դրա կայուն զարգացումը առանց վնաս հասցնելու բնական և մշակութային արժեքներին, որոնք զբոսաշրջիկներին գրավելու լավագույն պայմանն են: Դրանք պետությունը պետք է ձեռնարկի այդպիսի բացասական երեւույթների դեմ պայքարը և այդ զարգացումը ուղղորդի ճիշտ հունով՝ ապահովելով բնական և մշակութային արժեքները հաջորդ սերունդներին փոխանցելու գործընթացը»³: Այսինքն՝ անհրաժեշտ է չմոռանալ, որ զբոսաշրջությունը, ինչպես շուկայում գործող այլ ոլորտները, նույնպես ենթարկվում է դրա զլխավոր պահանջին՝ եկամտի ստացմանը: Այդ նպատակին հասնելու ճանապարհները բազմազան են, և դրանցից գրեթե բոլորն էլ հաշվի չեն առնում սոցիալական կամ հասարակական որևէ գործոն: Այստեղ եւս մեկ անգամ ապացուցվում է պետության միջամտության անհրաժեշտությունը՝ այս դեպքում որպես արժեքների պահպանման երաշխավորի դերում:

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության ոլորտը կարգավորվում է երկու հիմնական իրավական ակտերով՝ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով և Զբոսաշրջության զարգացման հայեցակարգով:

Պետության միջամտության անհրաժեշտությունը եւ դրական կողմերը կարելի է ներկայացնել հետևյալ օրինակներով. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության, Արգենտինայի, Բելառուսի, Չինաստանի, Թաիլանդի, Եգիպտոսի, Իրանի, Ֆրանսիայի և մի շարք այլ երկրների միջև կնքված պայմանագրերը, որոնք հիմնականում գիտական, կրթության, մշակույթի, հանգստի և այլ ոլորտներում գործարար հարաբերությունների դյուրինացման նպատակ են հետապնդում:

Ինչպես ցանկացած տուրքեր, այնպես էլ պետությունը իրականացնում է մարքեթինգային քաղաքականություն, որն ավելի լայնածավալ բնույթ է կրում: Դրա լավագույն ապացույցներից մեկը 2011թ. հունվարի 13-ին ՀՀ կառավարության՝ «Զբոսաշրջության աջակցության ծառայությունների 2011թ. ծրագիրը հաստատելու մասին» թիվ 78-Ն որոշման ընդունումն է: Սրա հիմնական նպատակներն

Առաջնային փորձեր			
	2010	2020	2030
Միջազգային զբոսաշրջային այցելուների քիվը (տարեկան 9% աճի կայուն մեծում)	0.60 մլն	1.50 մլն	3.00 մլն
Ներգնա զբոսաշրջությունից ստացված եկամուտը (ԱՄՆ դոլար, 2007թ. տվյալներով)	0.48 մլրդ	1.35 մլրդ	3.00 մլրդ
Ներքին զբոսաշրջային այցելուներ (ճեղքի ժամանումներ)	0.50 մլն	1.00 մլն	1.5 մլն
Զբոսաշրջային ոլորտի աշխատատեղերի բաժնեմասը ընդհանուր զբաղվածության մեջ	1.8%	1.9%	2.0%

Երկրորդային փորձեր			
	2010	2020	2030
Հայաստանի շուկայի մասնաբաժինը երկրային (կողմագլխով)	0.1%	0.2%	0.3%
Ընդհանուր քաղաքացիներ	22.416	49.315	51.370
Չուղևուցների զբաղվածությունը	33.0%	50.0%	60.0%
Մեկ շնչին ընկնող միջին օդային ծախս (ԱՄՆ դոլար, 2007թ. տվյալներով)	40	60	67
Հայաստանի տեղը Համաշխարհային տնտեսական ֆորումի մրցումն ակնթյան համաթվում	69	<60	<50

են զբոսաշրջության զովագրատեղեկատվական ապահովման համակարգի կատարելագործումը և զարգացումը, Հայաստանը ներկայացնող զովագրատեղեկատվական կայքերի մշակումը, տպագրումն ու տարածումը, միջազգային ճանաչված զբոսաշրջային ցուցահանդեսներին ու տոնավաճառներին մասնակցությունը, օտարերկրյա լրագրողների, տուրօպերատորների և փորձագետների՝ Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպումը, ավանդական տոնակատարությունների կազմակերպումն ու անցկացումը, զբոսաշրջային հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները, զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության ծավալումը: Սրանք միջոցառումներ են, որոնք անհրաժեշտ են մեր երկրում զբոսաշրջության ակտիվության խթանմանը: Ըստ վիճակագրական տվյալների՝ 2010թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում հանրապետությունն են ժամանել 683979 զբոսաշրջիկներ՝ 2009թ. նույն ժամանակաշրջանի 575281 ցուցանիշի դիմաց, աճի տեսակը կազմել է 18.9%⁵:

Զբոսաշրջությունը դրսեւորվում է նաեւ այնպիսի ծրագրերի միջոցով, որոնք հնարավորություն են տալիս զբոսաշրջային կենտրոններ դարձնել որոշակի հետաքրքրություն ներկայացնող վայրերը, բնակավայրերը, քաղաքները, տարածաշրջանները: Այդպիսի ծրագրերից են «Ծաղկածորը՝ միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջային կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին որոշումը (ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 9-ի թիվ 948-Ն որոշում), ՀՀ կառավարության հավանությանն արժանացած՝ Ջերմուկ քաղաքի զարգացման 2009-12թթ. ռազմավարությունը (16 հուլիսի, 2009թ., թիվ 29 արձա-

ՀՏԴ 379.8 : 342.5 (479.25)

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ատենախոսության թեմա՝
Զբոսաշրջության ռազմավարական կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները (ՀՀ կյուբերով)

Գիտական դեկավար՝
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ
 Տնտեսագիտության դոկտոր,
 պրոֆեսոր

Արա ԱՐԱՋԱՆՅԱՆ
 ՀՊՏՀ
 փզնեսի
 կազմակերպման
 ամբիոնի
 ասպիրանտ



նագրություն) եւ «Տաթեւ» զբոսաշրջային կենտրոնի զարգացման ծրագրի հայեցակարգային նպատակներն ու գերակա խնդիրները հաստատելու մասին կառավարության որոշումը (26 հունիսի, 2009թ., թիվ 848-Ն): Ըստ վերոնշյալի՝ մենք պետք է ունենանք ենթակառուցվածքային զարգացման բարձր մակարդակ, մշակութային հետաքրքրություն ներկայացնող մի շարք հուշարձանների վերականգնում, բնակլիմայական մակարդակի բարելավում, մրցակցային միջավայրի, նոր աշխատատեղերի ստեղծում, արդյունքում՝ զբոսաշրջիկների թվի աճ: Ըստ նախնական հաշվարկների՝ Ձերմուկ քաղաքում կատարված բարեփոխումներից հետո, այն պետք է տարեկան ընդունի մոտ 100.000 զբոսաշրջիկ, որից ստացված եկամուտը պետք է գերազանցի 100 մլն ԱՄՆ դոլլարը: Համեմատության համար կարելի է նշել, որ 2009թ. հաշվարկներով՝ այդ թիվը չէր գերազանցում 5000-ը⁶:

Չբոսաշրջության ոլորտին պետական միջամտության անհրաժեշտության լավագույն օրինակները է նաեւ Հայաստանի զբոսաշրջության հարավային միջանցքի մշակումը (28 փետրվարի, 2011թ., ՀՀ կառավարության համար կազմված նախագիծ): Սա երկարաժամկետ հատվածի համար մշակված ռազմավարություն է (մինչեւ 2030թ.): Նախագիծն ընդգրկում է գրեթե ողջ հանրապետությունը: Միջոցառումների խումբը ներառում է «Կենտրոնական» (Երեւանը, Գառնի-Գեղարդը, որ Վիրապը, Էջմիածինը, Արագած լեռը եւ Ծաղկաձորը), «Հյուսիս-Արեւելյան» (Վանաձորը, Դիլիջանը, Իջեւանը, Ստեփանավանը, Ալավերդին), «Հյուսիս-Արեւմտյան» (Գյումրին, Թալինը, Արփայի եւ Ախուրյանի արգելոցները), «Սեւան» (Սեւանի թերակղզին, Ծափաթաղ գյուղը, Վարդենիսը, Մարտունին), «Հարավային» (Եղեգնաձորից մինչեւ Գորիս՝ ներառելով Ձերմուկը, Սիսիանը եւ Տաթեւը) բաղադրիչները: Վերջինիս տրվում է ամանձնահատուկ նշանակություն, քանի որ Հայաստանի հյուսիսային շրջանները համեմատաբար բարվոք վիճակում են եւ զբոսաշրջային ավելի ակտիվ գոտի են համարվում:

Ըստ հայեցակարգի՝ սահմանվում են նաեւ առաջնային ու երկրորդական թիրախները (տես՝ աղյուսակը)⁷, որոնց հասնելու ճանապարհները անհնար կլինի ապահովել առանց պետական միջամտության:

Հայաստանի զբոսաշրջության հարավային միջանցքի նախագծի ուսումնասիրությունից պարզ է դառնում մի հանգամանք եւս: Այն բավական լավ միջոց է՝ տարածքային համաչափ զարգացման խնդիրներ լուծելու համար: Ամբողջ նախագիծը կազմված է՝ հիմքում ունենալով այդ խնդրի լուծումը: Միջոցառումների խումբը ներառում է գրեթե բոլոր մարզերը, դրանցում աշխատատեղերի ստեղծումը, գործարար աշխուժության մակարդակի բարձրացումը եւ այլն: Սա բնական է, քանի որ Հայաստանի Հանրապետությունում ուրբանիզացիայի մակարդակը բարձր է, բնակչության եւ գործարար միջավայրի մեծ մասը կենտրոնացած է Երեւան քաղաքում ու մարզկենտրոններում: Այս պայմաններում մեծ կարեւորություն է ստանում տարածքների համաչափ զարգացման խնդիրը, քանի որ այն լուծում է երկու կարեւոր խնդիր՝ աղքատության մակարդակի նվազեցում եւ զբաղվածության աճ:

Վերոնշյալը ներկայացնում էր զբոսաշրջությանը պետական ուղղակի ազդեցությունը: Անուղղակի ազդեցությունը դրսեւորվում է հիմնականում այլ ոլորտներում կատարված փոփոխությունների միջոցով: «Զբոսաշրջության ոլորտն իր յուրահատկությամբ միակն է, որն ինչպես անմիջական, այնպես էլ անուղղակի ազդեցություն ունի տնտեսության բազմաթիվ ճյուղերի վրա՝ տրանսպորտ, էներգետիկա, ջրային ռեսուրսներ, արհեստագործություն, մշակույթ, քաղաքաշինություն, սննդի եւ հանգստի ծառայություններ եւ այլն»⁸: Սա զբոսաշրջության ազդեցությունն է վերոնշյալ ոլորտների վրա, սակայն այդ ազդեցությունը միակողմանի չէ: Բազմաթիվ տարիների փորձն ապացուցել է, որ հնարավոր չէ ունենալ զարգացած զբոսաշրջություն՝ չապահով

վելով այն սպասարկող այլ ենթակառուցվածքների եւ օժանդակող մի շարք ոլորտների բնականոն ու համաչափ զարգացումը: Վիճակագրական տվյալները (Ֆրանսիա՝ 76800 հազ. մարդ, ԱՄՆ՝ 59700 հազ. մարդ, Չինաստան՝ 55700 հազ. մարդ, Իսպանիա՝ 52700 հազ. մարդ, Իտալիա՝ 43600 հազ. մարդ, Մեծ Բրիտանիա՝ 28100 հազ. մարդ, Թուրքիա՝ 27000 հազ. մարդ, Գերմանիա՝ 26900 հազ. մարդ⁹) եւս մեկ անգամ փաստում են, որ զբոսաշրջային կենտրոններ են համարվում այն երկրները, որոնք ունեն տնտեսական, քաղաքական կայունություն, մշակութային բարձր մակարդակ (լինի անտիկ թե՛ ժամանակակից), ինչպես նաեւ ապահովում են վերոնշյալ ոլորտների անխափան աշխատանք: Գաղտնիք չէ նաեւ, որ այս ամենի կազմակերպումը, իրականացումը եւ հետագա վերահսկողությունը առաջին հերթին դասվում են պետության պարտավորությունների շարքին:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ զբոսաշրջության ոլորտին պետական միջամտությունը ոչ միայն ցակայլի է, այլեւ անհրաժեշտ: Այդ անհրաժեշտությունը, հատկապես, պայմանավորվում է հետեւյալ հանգամանքներով.

- ✓ բարենպաստ օրենսդրական դաշտի ստեղծում,
 - ✓ ի տարբերություն մի շարք այլ ոլորտների՝ «խնամքի» ավելի մեծ կարիք է գգում,
 - ✓ զբոսաշրջությունը բավական թույլ է պաշտպանված անբարենպաստ գործոնների ազդեցությունից (տնտեսական, քաղաքական, օրենսդրական, միջազգային եւ այլն),
 - ✓ մյուս ոլորտների համեմատ մեծ է կախվածությունը ենթակառուցվածքային այլ համակարգերից,
 - ✓ պահանջում է բարեփոխումների, ներդրումների մեծ ծավալներ եւ այլն:
- Սրանք կարելի է բնութագրել որպես խնդիրներ կամ միջոցառումների համախումբ, որոնք պետք է իրականացնի պետությունը կառավարության միջոցով: Նշված խնդիրների լուծման արդյունքում կարելի է ակնկալել զբոսաշրջությունից ստացվող հետեւյալ դրական արդյունքները.
- ✓ զբոսաշրջությունը լուծում է սոցիալական մի շարք խնդիրներ,
 - ✓ ապահովվում է արտարժույթի ներհույք տվյալ տարածաշրջան, մեծանում է ՀՆԱ-ն, ստեղծվում են նոր աշխատատեղեր,
 - ✓ ազդում է մշակութային զարգացման վրա,
 - ✓ դրական ներգործություն է ունենում զբոսաշրջության ոլորտը սպասարկող բոլոր ենթակառուցվածքների վրա եւ այլն:

1. Экономика и организация туризма: международный туризм, Под ред. И.А. Рябовой и др., Москва 2005, с. 278.

2. Կաշայան Վահան, Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Առեւտրաբանություն, Երեւան 2010, էջ 114

3. Экономика и организация туризма, узк. изд., с. 281.

4. www.arlis.am

5. <http://www.mineconomy.am/am/20/6>. Ձերմուկ քաղաքի զարգացման 2009-2012թթ. ռազմավարություն, 2009թ. հուլիսի 16-ի արձանագրություն

7. ՀՀ կառավարության համար կազմված՝ Հայաստանի զբոսաշրջության հարավային միջանցքի նախագիծ, 28 փետրվարի, 2011, էջ 60

8. Սյուզաննա Պապոյան, Զբոսաշրջային շուկայի զարգացմանը նպաստող օրենսդրա-իրավական դաշտը ՀՀ-ում, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում (գիտաժողովի կրթություն), Եր. 2007, 335-338 էջ

9. UNWTO Tourism Highlights, 2011 Edition, p. 6. Ներկայացված են միայն 2010թ. տվյալները: